ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 6

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

23 դեկտեմբերի 2023թ.

Նախագահ Մ.Ա.Զաքարյան

Քարտուղար Ք.Վ.Օթարյան

Մասնակցելեն գիտ. խորհրդի 12 անդամներից 10 անդամները ։

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ.Ա.Զաքարյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. **Բակալավրի ավարտական աշխատանքների նվազագույն և առավելագույն ծավալների սահմանում:/զեկ. դեկան Մ.Զաքարյան**
2. **2023-224թթ. ուս. տարվա 1-ին կիսամյակի առկա և հեռակա ուսուցման քննաշրջանի ժամանակացույցի հաստատում/զեկ. դեկան Մ.Զաքարյան**
3. **Հաշվետվություններ դասալսումների արդյունքների վերաբերյալ/ Զեկ ամբ .վարիչներ՝ Ա.Հովակիմյան, Գ.Սիմոնյան**

Առցանց քվեարկությամբ՝ 10 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝ 6/1

- Հաստատել նիստի օրակարգը:

Օրակարգի առաջին՝ «**Բակալավրի ավարտական աշխատանքների նվազագույն և առավելագույն ծավալների սահմանում** » հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ Մ.Զաքարյանը:

Նա ներկայացրեց, որ ըստ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և

գնահատման կարգի բակալավրի ավարտական աշխատանքի շարադրանքի նվազագույն և առավելագույն ծավալները սահմանում է ֆակուլտետի գիտական խորհուրդը՝ ելնելով տվյալ մասնագիտության առանձնահատկություններից։

Տեղի ունեցավ քննարկում։

Արտահայտվեցին՝ Գ.Սիմոնյանը, Ա.Հովակիմյանը, Գ.Գուլակյանը, Ք. Օթարյանը։

Առցանց քվեարկությամբ՝ 10կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝ 6/2

Բնագկան գիտությունների ֆակուլտետի բակալավրի ավարտական աշխատանքի շարադրանքի նվազագույն ծավալը սահմանել 20 էջ, առավելագույն ծավալը սահմանել 40էջ։

Օրակարգի երկրորդ՝ «2023-224թթ. ուս. տարվա 1-ին կիսամյակի առկա և հեռական ուսուցման քննաշրջանի ժամանակացույցի հաստատում» հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ Մ.Զաքարյանը։ Նա ներկայացրեց արդեն կազմված ժամանակացույցը։

Առցանց քվեարկությամբ՝ 10կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝ 6/3

Հաստատել **2023-224թթ. ուս. տարվա -ին կիսամյակի առկա և հեռական ուսուցման քննաշրջանների ժամանակացույցերը։**

Օրակարգի երրորդ՝ « Հաշվետվություններ դասալսումների արդյունքների վերաբերյալ »

Հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկան **Գ.Սիմոնյան, Ա.Հովակիմյան**ը:

Գ.Սիմոնյանի ներկայացումը հետևյալն էր.

2023 թվականի սեպտեմբեր ամսից «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության » ամբիոնում դասալսումները կատարվել և իրականացվել են համաձայն դասալսումների ժամանակացույցի և նոր ընդունված կանոնակարգի, ամբիոնի վարիչի և դասախոսների կողմից: Ամբիոնի դասախոսների կողմից դասավանդվող առարկաները հիմնականում մաթեմատիկական առարկաներն են և որոշ բնագիտական՝ ֆիզիկա կենսաբանություն և էկոլոգիա առարկաներ:

Դասալսողները՝ Գ. Սիմոնյան, Մ. Զաքարյան արձանագրել են, որ դասավանդման գործընթացներում դասախոսների կողմից լայնորեն կիրառվում են դասավանդման և ուսուցանման արդիական մեթոդներ և հնարքներ ինչպիսիք են հարցումը, զրույցը, մտային գրոհները, խմբային աշխատանքը, թեմաների և լուծումների քննադատական վերլուծությունները, նոր լուծումների առաջադրումը, ինքնուրույն հետազոտական աշխատանքը:

Ա.Հովակիմյանի ներկայացումը հետևյալն էր.

Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնում դասալսուները, համաձայն կանոնակարգի, իրականացվում են ամբիոնի վարիչի և դասախոսների կողմից՝ ըստ դասալսումների ժամանակացույցի: Նշենք, որ ամբիոնի դասախոսների մեծ մասն ունի երկարամյա գիտամանկավարժական փորձ և տիրապետում է դասավանդման արդյունավետ մեթոդների: Ամբիոնի երիտասարդ դասախոսները հետևողաբար զարգացնում են իրենց մանկավարժական կարողությունները ինքնուսուցման և վերապատրաստումների միջոցով, ինչպես նաև ավագ ընկերների լավագույն փորձի հիման վրա:Ամբիոնի կողմից ուսումնական գործընթացը կազմակերպվում է պատշաճ մակարդակով: Ապահովվում է ուսանողների ներգրավվածությունը դասապրոցեսում, խրախուսվում է ուսանողների ակտիվ մասնակցությունը քննարկումներում, կիրառվում են տարբեր ինտերակտիվ մեթոդներ,

շեշտադրվում է ուսանողակենտրոն մոտեցումը: Ուշադրության կենտրոնում են ինքնուրույն աշխատանքը, հետազոտություն կատարելու և թիմում աշխատելու հմտությունների զարգացումը:

Որոշում՝ 6/4

Ընդունել ի գիտություն

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Մ.Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Ք.Վ.ՕԹԱՐՅԱՆ